

Ի քարտիր աւազանդ՝
 Ար՝ի ներքև դազաթանդ,
 Արդեզ որքան մարմիններ
 Լուացուեր են ու պատանդուեր:
 Չեռք՝ի ծնօտիս՝ աչք տրխուր,
 Աւերակացոջ քով նրատիմ:
 Խօսէ՛ ըսէ՛ ինչ նոր հին
 Կենանքեր տեսնես բիրաւոր:
 Այդ քու քարերդ հընաւեր
 Բիւր դիւցազունք են կոներ,
 Գեզ տեսաւ Բիւրն՝ի Նաւանջ
 Գրլուխ ծըռեց անց յառաջ:
 Երբ մեծ արքայն Միհրըրատ
 Չարկաւ իրխանք շատ յերկաթ,
 Երբ ծովէ ծով վաննց զՅոյն՝
 Գեզ հեռուէն ետ ողջւն:
 Թագք, Թագաւորք սահեցան,
 Ազգեր մեծցած՝ պըզտեկցան,

Ղառլուխ՝ վըսեմդ սյգ ճակատ
 Իսկի մինաց անթառամ:
 Աւր և Թըռչիմ մուորիմ
 Սար Թէ՛ ՚ի ծով կամ՝ ՚ի խոր,
 Դառնամ՝ ՚ի գլուխդ Թէ՛ հայիմ՝
 Ինձ մօտ Թըռխ շուրջ բոլոր:
 Եկայ, տեսայ, մայլեցայ,
 Մըտաք սըրտաք դերուեցայ:
 Ղառլուխ, մէկ մ՛ալ երբ դառնամ
 Աչքովդ նայիմ աննրման:
 Աղջնմբ կեցիր, ո՛վ Ղառլուխ,
 Հայրենի տանս աչք գըրտօ:
 Գեզ՝ կոյս համարդ կարօտով
 Տայ Նուրիխան մորմաղով:
 Բայց ահա մնայլ զիս պատեց,
 Լոյս աչքերուդ խաւարեց:
 Ղառլուխ՝ արդեք ամպերէս
 Մէկ մ՛ալ նայիս զուարթերէս:

Հ. Մ. ՆՈՒՐԻԻԱՆ

ՄԿԵՆԵՐՈՒՆ ԵՒ Ա.ՔԻՍԵՆԵՐՈՒՆ ԿՈՒՒՒՆ

Տըներուն մէջը կատուներ,
 Իսկ դուրս տեղունաք շար Աքիսներ,
 Մըկներուն մօտը կը մարեն,
 Բայներ կ'արեն կը քանդեն:
 Թէ չլլային սյգ յետիններ,
 Գեղացի կամ լեռան Մըկներ,
 Պէտք ատենին՝ չէ Թէ հարիւր կամ հազար,
 Այլ կըրնային անպատճառ
 Իրենց ազգէն միլիոնաւոր
 Որք հանելու քաջ քաջ զինուոր:
 Այլ դու տե՛ս փորձանք,
 Ամէն անկիւն, ամէն ծակ,
 Գիգուած խոտին բարդին տակ,
 Դատին դար, փոս, խոր տեղունաք՝
 Այդ շար կենդանիք
 Հասուցին ժանիք:
 Վերլապէս Մըկներուն
 Հատաւ համբերութիւն:
 Որ մի ատեան ժողովեցան
 Մեծ փոքր ամէնքըն միարան,
 Ար դարման մի կամ հար զըտնեն
 Ազատութեան՝ Աքիսներէն:
 Շատ խորհուրդք, շատ խընդիլք,
 Շատ վէճեր և կըռիւք
 Ըլլալէն վերջ, որոյցին,
 Մեծ բազմութեամբ քըւէին՝
 Թէ պէտք է որ յայտնի
 Պատերազմ մի բացուի:
 «Չատ մենամարտք այն տեղ կամ այս»
 «Միշտ եղած են մեզ ՚ի վընաս»:

Երբ Մուկ մ'ասաց, փորձով սորված,
 Պոչն Աքիսի մ'ճանկը Թողած.
 «Մենք բազմութեամբ կ'ըլլանք յաղթող»:
 Կըրկնեց մի սյլ Մուկ, գիրք կըրծող.
 » Յայտնի ձեզի օրինակ
 » Մեր օրերուն պատերազմք,
 » Փլեմնա, Սատով ու Սետան,
 » Որք բազմութեամբ առնուեցան »:
 Այս խօսքերուս՝ ծափածայն՝
 Ամէն Մըկներ հաւնեցան:
 Առանց ատեն կորսնելու
 Պատգամաւոր զըրկեցին՝
 Թէ «Այս ինչ տեղ, այս Թըլին,
 » Մըկանց քաջ ազգք կըռուելու
 » Աքիսներուն ձայն կու տայ.
 » Պատրաստ կեցիք ձեր բանակով,
 » Գործք պէտք է որ արինով
 » Գըրլուխ ելնէ՛ ու վերլանայ »:
 Եւ իրենք շուտով,
 Կարգով կանոնով,
 Պատրաստուեցան ՚ի կըռիւ.
 Չոկ, գունդ, խըմբեր բազմութիւ,
 Ամէնք մէկ տեղ մի բանակ,
 Թևեր ՚ի յալ և յահակ:
 Ամէն բաժին զատ զատ ունէր
 Գընդապետներ, խըմբավարներ:
 Այլ բոլորին միայն մի հատ
 Հրամանատար ըստրատելատ:
 Բոլոր վառուած ՚ի զէն՝ ՚ի զարդ,
 Ասալնորդաց գըլուխ սողուարտ:

Արքաներ կ'եփի, շուտով կ'ուզեն
 Վրէժ առնուլ Աքքաներէն . . .
 Հըզնաժամին տըւաւ վախճան
 Կարմիր դրօշն արեան նըլան,
 Փողըն հընչեց պատերազմի.
 Քաջեր յառալ, 'ի դաշտ իլան:
 Հոն թըշնամին գըտան ոսքի,
 'Իրօշներըն քաց' 'ի հով ծառան:

Խառնուրդ եղաւ խիտ ահաւոր,
 Շատեր ընկան խոց վիրաւոր.
 Արիւն վազեց գետի մը պէս,
 Կարմիր ներկեց դաշտին երես:
 Այլ քաջ քաջի պատուհելով
 Եւ բըռնութեամբ խզախելով,
 Անորոջ էլք պատերազմին
 Տատանէին այս կամ այն դին:
 Ոչ թէ միայն գորովարք,
 Այլ հասարակ զորավանք,
 Յարիւն փոյի թաւալած
 Չէ մի, այլ շատ վէրք առած
 Հոն կ'ընտրէին մեռնիլ ինչալ
 Քան վատութեամբ ետև դառնալ: . . .

Շատուորութիւն այս անգամ
 Չեղաւ կըռուէս յաղթական: —
 Աքքաներ հասան առին
 Կարմիր դրօշ պատերազմին:

Մըկներուն ստաղկ
 Չունեցաւ համբանք:
 Ողջ մընացողք երբ տեսան՝
 Որ բոլորով յաղթուեցան,
 Հա՛ մէկն այս ձեղք, միւսն այն ծակ,
 Անհետացաւ Մկանց բանակ:
 Իսկ զորավարք ցըշուանաղարդք,
 Սաղաւարտեալ նախարարք,
 Ամէնքն այլ Աքքաներուն
 Չու՛ հեղան ակոսաներուն.
 Չի փետրաղարդ զարգամանակ,
 Թուրեր երկայն և բարակ
 Արգելք եղան նեղ ծակէ ներս
 Սողոսկելու՝ այլ մըկանց պէս:

Երկայն առակիս համառօտ խորատ,
 Միշտ վըտանգաւոր՝ աւելորդն է զարդ:
 ԼԱՅՈՒՂԻՆ

ԿԱՅՅՍԱԿՆ ՈՒ ԳՈՐՏԳ

Օգերուն վերեր կայծակն կ'որոտար,
 Փոշորիկ զամպեր կը խառնէր իրար,
 Օձի պէս մէջէն սողոսկեր փայլակ.
 Հունձք, ցորեն դաշտին գըշուս ոսքի տակ:
 Այս խառնաշփոթ փոթորիկին ասեն
 Սարսափած գողային գորտեր վախերէն,
 Իրենց շրթեղէն տուներուն խորեր:
 — Երանի գըռուցելով՝ վախճաւ բան էր:
 Իսպ, պար դագոբեցան, երգք ու կարկաչանք,
 Լըռութիւն պատեց ճախճն ու լըճակ,

Ազդ ու ձեւ գորտուց՝ ջըբարոյջ կորեան:
 « Մեր մեղաց համար այս օրերն եկան,
 Մերունի գորտ մի՛ խըռֆած կըռկըռաց
 Սիրաջ գողալով աշեր կըզոցած:
 « Աշխատե՛ք երկինջ սաստը մեղմուլու,
 « Մեր մեղք են պատճառ շարթիցն ահարկու: »
 Զի երբոր երկինջ մըլժնած կ'որոտայ
 Գորտուց մեղքերէն այլ պատճառ չըկայ:

ՊՈՒՏՅՆ ԺԻՂՅԵՐ

ՄԱՐԳԱՐԷ

Յորմէհետէ մինչ Դատաւորն մըշտընջեան
 Ես զօրութիւն ինձ գիտեց զամենայն,
 Յաջըս մարդկան ես ընթեռնուամ համարձակ
 Զէջըս չարեաց և դժուութեանց վըրիպակ:
 Համբարձի ձայն ուսուցանել ըզտրոյն,
 Չարգարութեան՝ մաքրակենցալ գիտութիւն.
 Ընդ այն խոժոռ մերձաւորք իմ համօրէն
 Առին քարին՝ զի քարիտ զիս արասցեն:
 Յայնժամ արկի զգըլտով իմով ըզմոխիր
 Լըքի քթալաք, թողի էլի վըշտակիր՝
 Յանապատի կայալ անձին զանցիկ ասուն (չուն:
 Տրօլք Աստուծոյ կերակրիմ՝ արդ զէրդ թըռւ
 Կամ աստ պատկուտ աղէեցութեանց երկնու
 Ինձ չըպատուի կան արարածքս երկրաւոր. (ւոր,
 Ունկընդիբ են իմց խոսիլ սասեղ պար,
 Զըւարթագին փայլատակեալ լըւտովաւ:

Մինչ խառնամբիս 'ի քաղաքէն շուտափոյթ
 Արադ արադ մեկնիմ՝ գընամ, ձերք անտուտ
 Հառաքանեալ 'նդ անմեղ մանկանց՝ զայս ասեն,
 Յաջ ու 'ի շըրթունս ծիծաղ անարդ և դժխեմ:
 « Հայեցարուք, թող օրինակ լինի ձեզ
 » Այրըջ ինքրիտ. անմիաբան դա ընդ մեզ՝
 » Յինք համոզել շըդէներ, յիմար սընսպարծ:
 » Թէ ընդ շըրթունս իւր խօսիցի ինքն Աստուած:
 » Տեսէք մանկուզք, հայեցարուք օ՛ն ընդ այրդ:
 » Չէ գէւէք տըխուր, վատիտ մարմնով և գունատ:
 » Տեսէք զի արդ աղքատ է դս և արնակ,
 » Անեցուն եղեալ ասակ նըշաւակ: »

ԼԵՐՄՈՒԹՈՎ

ԱՂՈԹԻՔ

Մինչ 'ի պահու կենաց զժժիւմ՝
 Մըտատանջ վըշտք զըբարիւս պատեն,
 Աղօթք և երգ ըսքանչական
 Ատմ ինձէն ես 'ի բերան:
 Գոյ զօրութիւն ինչ բարեկից
 Ի ձայնաւոր բանս աղօթից,
 Եւ շընչէ ինն անհաս մարդկան
 Ի նոսա բոյր նըւերական:
 Զերգ 'ի սըրտէ բեռն թաւալգըլր
 Կասկածք վարոյնք գըշուն բոլոր.
 Մարդ հաւատայ և արասուէր.
 Ո՛հ, թէ քանի՛ հնչուութիւն է:

ԼԵՐՄՈՒԹՈՎ

Թարգմ. Հ. ՔԻՐՈՎՅԵ Վ. ՔՈՒՆԵՆԵՐԵԱՆ